Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
մարտի 21 -ի N 280 - Ա
որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը | Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը | Իրավական հիմքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | «Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի աջակցության անհատական սոցիալական ծրագրի կազմման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 2. | «Որդեգրողի և որդեգրվողի համադրելիու-թյան չափանիշները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մաս |
| 3. | «Հայաստանի Հանրապետության կառավա-րության 2010 թվականի մարտի 18-ի N 269-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | 2018 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ ընտանեկան օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մաս, 116-րդ հոդվածի 1-ին մաս և 118-րդ հոդվածի 4-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 4. | «Երեխա որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի բովանդակությանը, դրան ներկայացվող պահանջները, ծրագրի բովանդակությունը սահմանող իրավասու մարմինը, ծրագրի կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ ընտանեկան օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մաս |
| 5. | «18 տարին լրացած անձի որդեգրման փաստի, ծննդավայրի և ժամանակի, ինչպես նաև կենսաբանական ծնողի անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ ընտանեկան օրենսգրքի 128-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 6. | «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, որակավորման և վերապատրաստման, ինչպես նաև երեխայի ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացող վիճակի փոփոխումն ու դրա չափորոշիչները, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու կարգը, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի և դաստիարակության նկատմամբ վերահսկողության կարգը, խնամատար ընտանիքի հետ հանդիպումների և այցելությունների պարբերականությունը, ուսումնասիրության կարգը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը և չափը, խնամատարության պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ ընտանեկան օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին և 12-րդ մասեր, 137.1-ին հոդվածի 7-րդ մաս, 139.1-ին հոդվածի 8-րդ մաս, 140-րդ հոդվածի 1-ին մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | | | | |
| 7. | «18-23 տարեկան անձանց նկատմամբ՝ որպես պետության կողմից տրամադրվող հետխնամքի աջակցություն՝ մասնագիտացված խնամատարության իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ ընտանեկան օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մաս |
| 8. | «Այն հիվանդությունների ցանկը սահմանելու մասին, որոնց առկայության դեպքում ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից կամ երեխայի որդեգրումը կարող է վերացվել» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ և 130-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ